Հաստատված է
Տնօրինության 28.04.2026թ.-ի
Թիվ DEC 12-35 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում՝ 11.05.2026թ.-ից:

Անշարժ գույքի գրավադրմամբ սպառողական վարկ/վերաֆինանսավորում		
Վարկի նպատակ	Վարկառուի անձնական/ընտանեկան սպառողական ծախսերի ֆինանսավորման և/կամ Վարկառուի/ընտանիքի անդամների՝ այլ ֆինանսական կազմակերպություններում գործող վարկերի վերաֆինանսավորման նպատակներով տրամադրվող վարկ	
Վարկառու*	18–65 տարեկան ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, որոնց տարիքը վարկի սպասարկման ողջ ընթացքում չի գերազանցի 65 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող երաշխավոր/համավարկառու անձ	
Երաշխավոր*	Ֆիզիկական կամ Իրավաբանական անձ	
Գրավատու*	Վարկառու և/կամ վերջինիս հետ համատեղ տնտեսություն վարող կամ ընտանիքի անդամ (ամուսին, երեխա, հայր մայր,քույր, եղբայր):	
Վարկի արժույթ	ՀՀ դրամ	
Տեսակ	**Եկամուտների հիմնավորմամբ**	**Առանց եկամուտների հիմնավորման**
Վարկի ժամկետ	24-120 ամիս	24-120 ամիս
Վարկի գումար	2 000 000–100 000 000 ՀՀ դրամ	2 000 000–30 000 000 ՀՀ դրամ
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք	24-96 ամիս - 15% 97-120 ամիս - 15.5%	24-96 ամիս - 17% 97-120 ամիս - 19%
	Վերաֆինանսավորման պայման, (գործող տոկոսադրույքից **-2%***)** բայց ոչ պակաս, քան վարկատեսակի պայմանով սահմանված տոկոսադրույքի նվազագույն չեմերը	
Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույք	16.24-21.55%	19.89-23.35%
Տոկոսադրույքի տեսակ	Առաջին 3 տարին՝ ֆիքսված, այնուհետև՝ ճշգրտվող	
Վարկի տրամադրման և սպասարկման վճար	Չի կիրառվում	
Ապահովագրություն	Չի կիրառվում	
Մարման եղանակ	Անուիտետային (հավասարաչափ մարում)	
Մարումների հաճախականություն	Ամսական	
Տույժեր ժամկետանց մայր գումարի և տոկոսի նկատմամբ	1. ժամկետանց վարկի համար՝ օրական 0.1% 2. ժամկետանց տոկոսագումարի համար՝ օրական 0.13%	
Վարկի տրամադրման եղանակ	Անկանխիկ	

Հաստատված է
Տնօրինության 28.04.2026թ.-ի
Թիվ DEC 12-35 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում՝ 11.05.2026թ.-ից:

Վարկի վաղաժամկետ մարման տույժ	1. Սպառողական կրեդիտավորման մասին ՀՀ օրենքով կարգավորվող վարկերի դեպքում՝ **Չի կիրառվում** 2. Սպառողական կրեդիտավորման մասին ՀՀ օրենքով չկարգավորվող վարկերի դեպքում-**3%**՝ վարկի ամբողջական մարման դեպքում:	
Վարկի ապահովվածություն	Անշարժ գույք	
Գրավադրվող անշարժ գույքին ներկայացվող նվազագույն պահանջներ (առանց եկամուտների հիմնավորման պայմանի դեպքում)	1. Պետք է ունենա 100% փաստացի ավարտվածության աստիճան 2. Չպետք է գտնվի 3-րդ և 4-րդ աստիճանի վթարային շենքում կամ ունենա 3-րդ և 4-րդ վթարայնության աստիճան 3. Գրավադրման արժեքը պետք է լինի նվազագույնը 20 000 000 ՀՀ դրամ 4. Չպետք է լինի գյուղատնտեսական նշանակության հողատարածք:	
Վարկ/Գրավ հարաբերակցություն	Գույքի գրավադրման արժեքի*** առավելագույնը 1. 90%՝ Երևանում գտնվող գույքի դեպքում 2. 75%՝ Երևանից դուրս Բանկի համար ընդունելի տարածքում****	Գույքի գրավադրման արժեքի*** առավելագույնը 1. 50%՝ Երևանում գտնվող գույքի դեպքում 2.40%՝ Երևանից դուրս Բանկի համար ընդունելի տարածքում****
Գրավի գնահատում	Գրավը ենթակա է գնահատման Բանկի հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ գործակալության կողմից և/կամ Բանկի աշխատակցի կողմից: Մինչև 10 000 000 ՀՀ դրամ վարկերի դեպքում գնահատումը իրականցվում է միայն Բանկի աշխատակցի կողմից՝ անվճար	
Վերաֆինանսավորման լրացուցիչ պայմաններ	1. Վերաֆինանսավորման պայմանը գործում է, երբ վերաֆինանսավորվող վարկերից առնվազն մեկը անշարժ գույքի գրավադրմամբ է: 2. Գույքի գնահատման, գրավի վավերացման և նոտարական ծախսերը իրականացվում են Բանկի կողմից: 3. Ներքոնշյալ բոլոր չափանիշներին համապատասխանելու դեպքում իրականացվում է պարզեցված վերլուծություն, և վարկավորումը կատարվում է «եկամուտների հիմնավորմամբ» պայմանով: • Վերջին 12 ամսվա ընթացքում վարկառուն ստացել է ոչ ավել, քան 5 անգրավ վարկ: • Գրավադրվող գույքը գտնվում է սույն վարկատեսակի շրջանակում՝ Բանկի համար ընդունելի տարածքում: • Վերաֆինանսավորվող վարկը(երը) սպասարկվում է(են) մայր գումարի և տոկոսների ամսական մարումներով (ոչ միայն տոկոսագումարների վճարմամբ): • Վարկառուն պետք է ունենա վերաֆինանսավորվող վարկ(եր)ի գծով առնվազն 12 ամսվա սպասարկման պատմություն:	

Հաստատված է
Տնօրինության 28.04.2026թ.-ի
Թիվ DEC 12-35 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում՝ 11.05.2026թ.-ից:

	• Վերաֆինանսավորվող վարկերի ամսական վճարման չափը (հանրագումարը) չի գերազանցում նոր տրամադրվող վարկի ամսական վճարման չափը:

*Գրավատուն, Վարկառուն, Երաշխավորը չպետք է ունենան ժամկետանց, հսկվող և ավելի խիստ դասերով դասակարգված վարկային պարտավորություններ:
**Վերաֆինանսավորման վարկի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է ընդունվում վերաֆինանսավորվող անշարժ գույքի գրավադրմամբ վարկի անվանական տոկոսադրույքի չափը:
***__Գրավադրման արժեքը__ որոշվում է անկախ գնահատողի կողմից հաշվարկած շուկայական արժեքի հիման վրա, որը կարող է ճշգրտվել Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:
****Բանկի համար Երևանից դուրս գրավադրվող գույքի ընդունելի տարածքներն են՝ **Բոլոր քաղաքային բնակավայրերը**, Ակունք, Այնթապ, Արամուս, Նոր Խարբերդ, Բալահովիտ, Հայանիստ, Լուսակերտ, Արբաթ, Նոր Գեղի, Գետափնյա, Ջրվեժ, Ազատաշեն, Առինջ, Գեղանիստ, Ձորաղբյուր, Արենի, Վերին Պտղնի, Փարաքար, Քասախ, Սարդարապատ, Պռոշյան, Նորապատ, Զովունի, Մերձավան, Արզական, Պտղունք, Գողթ, Արգավանդ, Արզնի, Հալիձոր, Գառնի, Տաթև, Բջնի, Գյուլագարակ, Գեղաշեն, Օձուն, Գետարգել, Դարպաս, Պտղնի (գյուղ), Ենոքավան, Կոտայք, Քանաքեռավան, Նոր գյուղ, Օհանավան, Ուշի, Ագարակ, Կարբի, Օշական, Բյուրական, Փարպի, Ոսկեվազ, Ուջան, Սասունիկ, Մուղնի:
Վարկառուի Վերջին 12 ամիսների ընթացքում ժամկետանց օրերի թույլատրելի հանրագումարը չպետք է գերազանցի.

1. 30 օրը՝ եկամուտների հիմնավորմամբ վարկավորման դեպքում,
2. 15 օրը՝ առանց եկամուտների հիմնավորման վարկավորման դեպքում:

Ծանոթություն

1. Նախքան պայմանագրի կնքումը Բանկը վարկառուին և երաշխավոր(ներ)ին տրամադրում է սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են տրամադրվող վարկի էական պայմանները:
2. Վարկը տրամադրվում է Բանկի բոլոր մասնաճյուղերում:
3. Եկամուտների հիմնավորմամբ վարկերի դեպքում հաշվարկվում է ԸՊԵ (Ընդհանուր պարտքային վճարումների հարաբերությունը զուտ եկամուտներին գործակիցը՝ ԸՊԵ≤ 60% ներառյալ Վարկառուի ընտանիքի անդամների) համատեղ տնտեսություն վարողների/ վարկերի ամսական վճարումները:
4. Առանց եկամուտների հիմնավորման վարկերի դեպքում ԸՊԵՀ չի հաշվարկվում:
5. Եկամուտների հաշվարկում ներառվում է նաև Վարկառուի հետ փոխկապակցված և ընտանիքի անդամ հանդիսացող /համատեղ տնտեսություն վարող/ անձանց եկամուտները:
6. Սույն սակագների շրջանակներում տրամադրվող ծառայություններից օգտվելու նպատակով վարկառուն ստորև նշված երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարում է հետևյալ չափով.
   6.1. Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10 000 ՀՀ դրամ,
   6.2. Իրավունքի պետական գրանցման վճար՝ 26 000-52 000 ՀՀ դրամ,
   6.3. Նոտարական վավերացման վճար՝ 12 000-30 000 ՀՀ դրամ,
   6.4. Գրավադրվող գույքի գնահատման վճար՝ 15 000-25 000 ՀՀ դրամ:
7. Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 1/365 հարաբերակցությամբ, իսկ նահանջ տարվա համար՝ 1/366 օրվա հաշվարկից:
8. Ստորև ներկայացվում է ճշգրտվող հաստատուն տոկոսադրույքի հաշվարկման մեթոդաբանությունը.

Հաշվարկման բանաձևը՝ ԿՃ= ԿԲ+ԿՀ,

Հաստատված է
Տնօրինության 28.04.2026թ.-ի
Թիվ DEC 12-35 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում՝ 11.05.2026թ.-ից:

Որտեղ՝ **ՎՃ-Ճշգրտվող տոկոսադրույք**, **ՎԲ-Բազային տոկոսադրույք**, **ՎՀ-Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ**: Բաղադրիչների սահմանումները՝

8.1. ***Բազային տոկոսադրույքի առաջնային ցուցանիշ***՝ *ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույք* (https://www.cba.am/am)

8.2. ***Բազային տոկոսադրույքի երկրորդային ցուցանիշ***՝ ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի 6 ամիս ժամկետայնության եկամտաբերություն (https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx)

8.3. ***Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ***՝ Վարկի տրամադրման անվանական տոկոսադրույքից նվազեցված վարկի տրամադրման պահին առկա բազային տոկոսադրույք:

8.4. ***Առաջին վերանայում/սահմանում***՝ Պայմանագրի կնքումից 3 (երեք) տարի հետո:

8.5. ***Պարբերական վերանայումներ***՝ Յուրաքանչյուր 6 (վեց) ամիսը մեկ (փետրվար և օգոստոս ամիսների առաջին օրը):

8.6. ***Կիրառման ամսաթիվ***՝ Փետրվար և օգոստոս ամիսների առաջին օրվան հաջորդող մոտակա մարման ամսաթիվը: Տարեկան երկու անգամ:

8.7. ***Կլորացում***՝ Մաթեմատիկական կլորացման կանոններով՝ տասնորդական տոկոսի ճշգրտությամբ:

9. Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Փաստաթղթերի ցանկն այստեղ:

10. Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման կայացման դեպքում գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

11. Վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման գործոններն են՝

11.1. Հաճախորդի/համատեղ տնտեսություն վարող անձանց և գրավատուների, երաշխավորների վարկարժանության և գրավադրվող գույքի համապատասխանություն Բանկի կողմից սահմանված պահանջներին:

12. Վարկի տրամադրման վերաբերյալ բացասական որոշման կայացման գործոններն են՝

12.1. Հաճախորդի/համատեղ տնտեսություն վարող անձանց և գրավատուների, երաշխավորների վարկարժանության և/կամ գրավադրվող գույքի անհամապատասխանություն Բանկի կողմից սահմանված պահանջներին:

13. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար, որպես կանոն, Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկի Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

14. Հաճախորդի կողմից վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են՝ վարկի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսները, միջնորդավճարները և սպասարկման վճարները (առկայության դեպքում), իսկ տույժերը/տուժանքները (առկայության դեպքում) վարկի մարման նպատակով կատարված փոխանցումների համար և/կամ այլ գործառնությունների համար գանձվող միջնորդավճարները, վարկի սպասարկման նպատակով բացված հաշիվների սպասարկման համար գանձված գումարները, գործարքի նոտարական վավերացման, գրավադրվող գույքի պետական գրանցման և գնահատման դիմաց 3-րդ անձանց վճարված գումարները նվազեցման ենթակա չեն:

15. Հաճախորդն իրավունք ունի պայմանագրի կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում միակողմանիորեն լուծել Վարկային պայմանագիրը, եթե Վարկային պայմանագրով ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

Հաստատված է
Տնօրինության 28.04.2026թ.-ի
Թիվ DEC 12-35 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում՝ 11.05.2026թ.-ից:

16. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.fastbank.am, ինչպես նաև Բանկի գործունեության վայրերում:

17. **ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՉԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ և ՀՆԱՐԱՎՈՐ Է ՎԵՐՋԻՆՍ ԶՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ:**

18. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ ԵՎ ԿԲ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:**

19. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:**

20. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ»՝** www.fininfo.am **ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:**

21. **ՁԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:**

22. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ԵԹԵ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԻ ԱՐԺԵՔԸ ՉԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ, ԱՊԱ ԲԱՆԿԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԿԱՐՈՂ Է ԿԱՏԱՐԵԼ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐ ՁԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՇՎԻՆ:**

23. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՋՈՒՄ՝ www.fastbank.am:**

24. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ: ՀԱՃԱԽՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԿԱՊԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:**

25. Ֆինանսական կազմակերպությունների կողմից կնքված պայմանագրերի, համաձայնագրերի, համագործակցությունների կամ անդամակցությունների վերաբերյալ, որոնք ուղղակի ազդեցություն կարող են ունենալ սպառողների վրա, (օրինակ՝ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի և «Միասնական հաշվետվողական ստանդարտի» (Common Reporting Standard (CRS)) համաձայն) Բանկը կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Հաստատված է
Տնօրինության 28.04.2026թ.-ի
Թիվ DEC 12-35 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում՝ 11.05.2026թ.-ից:

26. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում:

27. **ՎԱՐԿԱՅԻՆ ՍՔՈՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԷՈՒԹՅԱՆԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՂՈՒՄՆԵՐՈՎ՝ www.fastbank.am, www.abcfinance.am, www.acra.am:**

28. **ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:**